լիներ այդպիսի մի բազմաբովանդակ ժողովածու պատրաստել (*)։

Մասել Ճառընտրի մանրամասն բովանդակութեան մասին, մեր խնդրից դուրս է. բաւական է յիշել, որ



Պատկեր 163.

նա տալիս է ոչ միայն Հին և Նոր Կտակարանների վաւերականները, այլ և անվաւեր գրքեր, որ համեմատաբար քիչ են յայտնի. ժամագիրքն ու Պատարագի արարողութիւնը, ապա Փիլոնի և եկեղեցական հայրերի՝ Բասեղ Կեսարացու, Գրիգոր Նիւսացու, Գրիգոր Աստուածաբանի, Եւագրի, Սեբերիանոսի գրուածքներն ու ճառերը են։ Փիլիսոփայականներից հազուագիւտ է Հերմեսի «Ամ իմանալի աշխարհ» գրութիւնը, 1124ա.։

Կեսարացու «Ցղջս. զ. օրեա աւուրց, զոր ասաց ի զատկի տօնին», սկս. «Լուաք ի գրոց», ներքեւի լուսանցքում Մխիթարը նկատում է. «զ. օրեայ գիրքս բ. թարգմանչաց է յաւելեալ, վս. որոյ ուրոյն են» 976ա.։ Եւագրի «Ճ. օրքն (Հարիւրաւորքն) զ. երորդք։ առաջին յաղթութիւք. ընդդէմ բանաստեղծիցն արտաքնոց». 1041ա.։ Լուսանցքում բոլորակի մէջ նկատում է՝ «Վարդան վարդապետի թարգմանել», իսկ ներքեւի լուսանցքում «Նորաթրքմն»։

Ճառընտրի գրիչ «Մխ. վդ.»ի և ժամանակագրութեան հեղինակի նոյնութեան բազմաթիւ և անհերքելի փաստեր է տալիս նրանց որոշ մասերի համեմատութիւնը. ա) թէ՛ այստեղ և թէ՛ այնտեղ Ս. Գրքի վաւերական և անվաւեր գրքերի ցանկը բերուած է նոյնութեամբ. բ) Ճառընտրի մէջ 261ա. լուսանցքում նշանակուած է նահապետների մի ժամանակագրութիւն, ճիշդ նոյն կերպով հաշուած, ինչպէս ժամանակագրութեան մէջ (եր. 33, 35, 36. Էմինի հրատ.). օրինակ «ՑԱդամա։ Վշղէ։ Մովսէս, Վպհզ.։ Դեբովրիա։ Տ Ճ Ի Սամուէլ» են.։ գ) Ճառընտիր լուս. 201բ. «Արտաշէս երկայնաբազուկ ամս Ի. ասա Եսթեր. ի սորա Ե. ամին ել Եզրաս գպիրն շինել զպարիսպն Եմի., որ եւ գրեց ի բերան զա. Հին Կտակարանն շնորհելոյին այ. եւ Ի. ամին ել Նեեմի տակառապետն աւգնել Եզրի» հաւասար է ժամանակագրութեան (եր. 39 և 40. հրատ. Էմինի)։ Ուրիշ շատ նմանութիւնների հետ, որ միայն հեղինակների նոյնութեամբ կարելի է հասկանալ, կան երբեմն և տարբերութիւններ փոքրիկ. այդ ապացոյց է, որ դոցանից մէկը, յետ ու առաջ է գրել և փոփոխութեան ենթարկել նորանոր հաշիւներով և ճշգումներով։ դ) Ժամանակագրութեան մէջ կայ հետեւեալ պարբերութիւնը. «Կարգաւորութիւնք գրոց սրբոց, որք ստուգաբանեցան ի Սարկաւագ վարդապետէ եւ գրեցան յինէն ի տէր Մխիթար վարդապետէս պատմագրէս ի մին տուփ յաւուրս ՃՀ» (եր. 33). Ճառընտրի մէջ էլ, արդա՛ւ, Ս. Գրքի վաւերական և անվաւեր մասերը, դորա հետ և առաւօտեան ժամերգութեան և պատարագի արարողութիւնը մի ամբողջութիւն են կազմում, 370 թերթից բաղկացած, որ օրական 2 թերթից մի բան աւելի է գալիս, մի քիչ դժուար, բայց ոչ անկարելի յարատեւ ջանասիրութեան և իւր գործին անձնուէր գրչի համար. թղթի կոկման և ուրիշ տեխնիկական աշխատանքների համար, անշո՛ւշտ, ունեցել է իւր օգնականները։ Իսկ եթէ ժամագիրքն ու պատարագի արարողութիւնը չհաշուենք, կանոնաւոր չափ լաւ գրչի համար։

Վերջապէս մի հանգամանք ևս, որ առաջին ան-

(*) Ընդարձակ մատենադարանի գոյութեան ապացոյցներ է տալիս և հեղինակի ժամանակագրութիւնը իւր բովանդակութեամբ և թարգմանական և հայ պատմագիրների յանկեր անուանել թուարկութեամբ (Հրատ. Էմինի, 22-23). Նաև Ստեփանոս Սիւնեցու Վկայաբանութեան մէջ օգտագործուած կամ յիշուած են որոշ աղբիւրներ, որ կորած են և որոնց մասին խօսք կը լինի քիչ յետոյ։